


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկն. ողջ դն. 80
» » վեցամսեայ » 50
Օտար Խրիկներ տարեկան Գրանք 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ՊԵՏՔԷ ԹԵ ՈՉ

Որքան նախապէս որոշուած օրերը կը մո-
տենան եւ կամ կանցնին, այնքան նուազ կը
խօսուի առաջնորդի մը ընտրութեան վրայ :

Իրաւ է որ մօտէն գիտակցութիւն չու-
նինք Առաջնորդարանի փոխաններուն մէջ ան-
ցած դարձածին վրայ, մանաւանդ այն օրէն
ի վեր որ Պէն-էլ-Մուրսի ժողովին եւ մեր մէջ
պզտիկ սեւ կատու մը անցնելու վրայ է ինչ-
պէս կըսեն մեր բարի ուսմանները, սակայն
մարդարէ ալ ըլլալու պէտք չկայ գուշակելու
համար թէ այս տարի ալ անուշ տեղը պիտի
կապուի այդ խնդիրը եւ դեռ երկար ատեն
ներ պիտի վայելենք արդի տեղապահական
անուշ գրութիւնը :

Երկու շաբաթ առաջ քաղաքական ժողո-
վի մէկ անդամին հետ մտերմօրէն ունեցած
մեր խօսակցութենէն ելած հետեւութիւն մը
հանել հարկ ըլլայ, սա համոզումը պէտք է
գոյացնենք թէ ինչպէս ժողովը շատ տրա-
մադիր չէ իր վէթոն տալու առաջնորդի մը
ընտրութեան մասին : Ça va sans dire :

— Էֆէնտիմ, առաջնորդի մը ստակ տա-
լու ժամանակ չունինք, կը պոռար մեր երեսն
ի վեր այնպիսի ինքնահաւանութեամբ մը որ
կարծես Բլոնտայի հանքերու գիւտը ինք ը-
րած է : Եւ իբրեւ կատարումն իր խօլ փա-
տառանութեան, կը յայտարարէր թէ մեր ազ-
գային գործերը այնքան լաւ կը քալեն որ նոյն
խօլ յիմարութիւն էր առաջնորդական խնդիր
մը մէջտեղ դնել եւ զբաղեցնել ժողովներն ու
ժողովուրդը :

Եթէ բարեբերուն ստորոտը գտնուած ըլ-
լայինք, Սփինքը անգամ քանի մը հազար տա-
րիներէ ի վեր գոց պահած բերանը պիտի
բանար սա քանի մը բառերը ուղղելու համար
մեր բարեբերալ խօսակցին ,

— Que vous ôtes naïf, mon ami.

Քանի որ խմբագրական մը յօրինելու
պիտի ծառայեն այս տողերը, եկէք աւելի լուրջ
ըլլանք :

Վայրկեան մը ենթադրենք որ այսօր ի-
րաւ, մեր ազգային սնտուկը ստակ չունի Ա-
ռաջնորդի մը ամսականը տալու համար, այս
կապացուցանէ թէ՛ առաջնորդարանի հասոյթ-
ները աւելի շատ եղած են Առաջնորդ մը գըտ-
նուած ատեն քան թէ հիմայ որ սակաւապետ
տեղապահով մը կը բաւականանանք :

Այս ստակ չի կայի պատրուակը ինչպէս
կը տեսնենք, սպասուած արդիւնքը ունենալու
սահմանուած չէ եւ քիչ մը վրան բաց չէ՞ք
գտնել . . . Ռատամէսի յօդուածներուն պէս
ինչի՞ ծառայեց ուրեմն սակագինի Մաք
Բինլէյական դրութիւնը եթէ իրապէս հա-
սոյթներուն նուազման պատճառ պիտի ըլլար
եթէ հասոյթները աւելցան, ուրեմն առաջնորդ
մը կրնա՞նք ունենալ իսկ հակառակը, եթէ նուա-
զեցան՝ պէտք է որ առաջնորդ մը ունենա՞նք
ինչպէս կ'ունենայիք մինչեւ այժմ :

Գալով միւս պատճառաբանութեան թէ
տեղական գործերու ընթացքը գոհացուցիչ է՝
Առաջնորդարանի մը հսկողութիւնը աւելորդ
luxes-երու կարգը անցնելու աստիճան, ասի-
կայ քիչ մը ջուր վերցնելիք խնդիր մըն է :

Եթէ այդպէս ըլլար, նախ Տեղապահ Հայ-
րը, որուն անկեղծ զգացումներուն վրայ կա-
կածելու պատճառ մը չունինք, չէր հրաժարէր
իր պաշտօնէն եւ Առաջնորդի մը անհրաժեշտ
պէտքը զգացնել չէր տար ուր որ անկ է :

Առաջնորդի մը պէտքը թերեւս ամեն
ժամանակէ աւելի հիմայ աչքի կը զարնէ ա-
մեն անոնց որոնք մեր ազգային պաշտօնական
չըջանականներուն հետ գործ ունին :

Մեր աւանդութեանց, բարբերուն եւ օ-
րէնքներուն բոլորովին անտեղեակ անձնաւո-
րութիւններու ձեռքը յանձնուած են այսօր
մեր կրօնական եւ ազգային նուիրական շա-
հերը, մեր եկեղեցին եւ մեր դպրոցը : Ա-
ռաջնորդարանը մեր ազգային տունը ըլլալէ
աւելի, միջազգային սակարանի մը երեւոյթը
առած է որմէ ներս մտնող ժողովականը ան-
պատճառ դրամական ծրագիր մը ունենալու
է իր գրպանին մէջ բարւոքելու համար սըն-
տուկին վիճակը :

Կրօնական իշխանութիւնը փայտէ մար-
դու դերը ստանձնելու դատապարտուած
է հոն, ինչ որ շատ չի նպաստեր ամրապնդե-
լու ժողովուրդին եւ եկեղեցիին մէջ գտնուած
կապը :

Այս պարագան կարծէ որ ի նկատի առ-
նուի, եւ ջանալու է դարման մը գտնել այս
տխուր կացութեան :

Տեղապահութիւնը բաւական զօրաւոր
ոյժ մը չենք նկատեր մենք եւ ահա ինչու ան-
գամ մը եւս կը պնդենք Առաջնորդի մը
պէտքին վրայ :

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

ԱՆԱՊԱՏԸ

Անեղբայրական ուղիանոս տուող
Ալեքանդրոս պէս ակտուած փոստով ,
Անապատը կը բնանայ անվերջօվ ,
Անեղբայրական ուղիանոս առաջ :

Դանդաղօրէն ուղտերու շարք մը կանցնի
Միօրինակ շարժումներով տատանկոտ,
Աւաղներուն մէջ հրակայ օձ անծանօթ
Դանդաղօրէն ուղտերու շարք մը կանցնի :

Յանկութիւնով ուսմանին կը խորհիւն ,
Կըրակներու մէջտեղ դրուած գով հաճոյր ,
Երբեմն անոր պէս խառտիւր ու տըխուր
Պատրանքներու ուսմանին կը խորհիւն :

ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

Լուսինն ցոլբերը կապուտակ
Միջոցորտին մէջ կը կախուին
Երազներու պէս անմեկին :

Ու կերկ սրին ծառերու տակ
Եղբերով տերեւներուն
Կանանչ ստուերը գողգոջուն :

Գիշերին մէջ կախարդական
Մզմաւանջներով յաճախուած,
Կանցնի լուսինը յամբընթայ ,

Քաղքին վրայ որ կերպէ
Իր ծածկոյթին տակ ըստուերի ,
Գորէթներով անկերպարան :

8 Մարտ 98

ԼԵՒՈՆ ԱՐԱՄԵԱՆ

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

ՊՕՄՊԷՅ, 19 մարտ 1898

Մահմետականները աշխարհի տմեն կողմ իրենց
չնորհրդ ցոյց կուտան : Հայաստանի, Կիլիկիոյ եւ ու-
րիշ զանազան տեղերու մէջ գործ դրուած գաղա-
նութիւններու անպատիւ մնալը, ինչպէս կերեւայ,
ամեն կողմ արձագանդ տուաւ : Հիմա կարգը եկաւ
Հնդկաստանի հետաւոր տիրերուն : Սահմանազխի
ուպստամբութիւնները դեռ չի վերջացած նոր մը
սկսու հնդկաստանի եօկորդ քաղքին մէջ :

Ամսոյ 9ին, կէս օրէ հտըը, 5000է աւելի մո-
լեռանդներու ահագին բազմութիւն մը մեծ խռովու-
թիւն ձգեց քաղքի ալ եւ այլ թաղերուն եւ փողոց-
ներուն մէջ : Անխտիւր ամեն գիւմարին ելած քը-
րիստոնեայի վրայ կը յարձակին, ըլլան տեղացի,
ըլլան եւրոպացի, պետական ծառայող թէ հասարակ
գործաւոր, ոստիկան թէ զինուորական : Հաւորդակ-
ցութիւնները դժուարացնելու գիտաւորութիւնով
կանխապէս հեռագրական թեքիւր շատ տեղեր կը
կտրուեն : Հոս ու հոն հիւսնաբանուցներու կրակ կու-
տան եւ բաւական թւով եւրոպացի ու տեղացի քրիս-
տոնեաներ կը վիրաւորեն :

Քաղքին նահանգապետը պատահած դէպքը

լեւելան պէս հեռագիր կուտայ փոխարկային՝ որ իր ցաւակցութիւնը յայտնելով մանրամասն տեղեկութիւններու կը սպասէ, հարցներով միանգամայն վերաւորուածներու վիճակն ու որպիսութիւնը։ Այս յիշարական ցոյցերուն ու խառնակութիւններուն առաջը առնելու համար, կառավարական բարձր հրահանով անմիջապէս ղէնքի կոչուեցան կանոնադրու կամաւոր զինուորներ, հեծեալ ու հետեւակ ուտիկաններ, պատերազմական նաւերու նաւաստիներ՝ որոնք քաղքին ամեն կողմերը ցրուեցան քրիստոնեաներու կեանքը ազատելու, խռովարարները ձերբակալելու և խանգարուած խաղաղութիւնն ու կարգը վերահաստատելու համար։

Ամեն կողմ վախ ու սարսափ տիրապետած է շուկաներն ու խանութները մեծ մասով մինչեւ հիւսիս փակուած են։ Ընդհանրական անշարժ ու մեռելային վիճակ մը կը տիրէ քաղքին մէջ։ Ամբողջ գործարաններու, կառավարական պաշտօնատեղիներու, նաւահանգստի, մարտատեղիներու, երկաթուղիներու և ուրիշ շատ մը տեղերու ծառայողներ, առանց բացառութեան ամենքն ալ գործադուլը ըրած են։

Այս մոլեռանդ, կոյր, անշարժ և յառաջդիմութեան գործին ոգով չափ հակառակ ազդէ կարծես թէ ուխտած ըլլայ ամէն օգտակար և բարեգործ ձեռնարկի արգելք ըլլալ։ Խառնութիւն հանել, կողոպտել, զրկել, սպաննել, առեւտրեւել երկրին խաղաղութիւնը վրդովել և հիմնովի տապալել։ Եւ ամիկայ միակ բաշտութիւնն է որ տրուած է այդ ընտրուած ազգին։

Աւերորդ չենք համարիր քանի մը ծանօթութիւններ տալ թէ ինչ շարժառիթներէ առաջ և կան այդ խռովութիւնները։

Անշուշտ ընթերցողներու շատերուն ծանօթ է թէ տարիէ մը ի վեր Պոսթէյի ինչպէս նաեւ Հնդկաստանի զանազան ուրիշ քաղաքներուն մէջ ժամ տախտը հազարաւոր զոհեր կը տանի և հետզհետէ աւելի սուր կերպովանք կը ստանայ։ Այդ պատճառով իսկ կառավարութիւնը ահագին ծախսեր ընելով յատուկ յանձնաժողով մը հաստատած է, որուն անդամները բժիշկներէ, տեսուչներէ և ուրիշ գանաղան ստորակարգեալ պաշտօնեաներէ բաղկացած են և որոնց պաշտօնն է թողէ թող, տունէ տուն պտըտել, այցելել ամեն հիւանդանոցները և թէ՛ ժամտախտով լուծուածներ կան, անմիջապէս փոխադրել ամեն ցեղի համար առանձին յատկացուած հիւանդանոցները, որպէսզի միեւնոյն տան մէջ գրաւնուող ուրիշ անձինք ալ միեւնոյն ախտով չվարակուին։ Սա ևս ըսել պէտք է որ քաղքին տունները մեծ մասով դատականաւոր են և հարիւրաւոր անձինք կը բնակին հոն։ Եթէ ժամտախտով լուծուած մը անմիջապէս չփոխադրեն և տունն ալ չմտքեն բոլոր հոն գտնուողները անմիջական ազդեցութիւնով կը վարակուին և անով փոխանակ քիչ շատ կոտորածին առաջը առնելու՝ աւելի և աւելի կը սաստկանայ ան ու քաղաքը քիչ ժամանակուան մէջ կը դառնայ կատարեալ աւերակներու և մոխիրներու կոյտ մը։ Յանձնաժողովի անդամները, իրենց սովորութեան համեմատ, պաշտօնին պահանջած պարտաւորութիւններն ու այցելութիւնները կատարած պահուն կը մտնեն մոլեռանդ մահմետականի մը ընտանեակէ և սերնետակը և բնութիւնը կատարելով կը տեսնեն որ անոր աղջիկը ժամտախտով լուծուած է։ Ուստի կը հրամայեն փոխադրել հիւանդանոց։ Բայց աղջկան ծնողը կընդդիմանան՝ ոչ մէկ կերպով չհամարուելով յանձնել իրենց զուտը։ Յանձնաժողովի անդամները երբ կը տեսնան իրենց համոզական խօսքերուն արդիւնք մը յառաջ չընթանալու և իրենք կերթան այդ մասին տեղեկութիւն տալ յանձնաժողովի մեծերուն որոնցմէ հրահանգ կը ստանան նորէն համոզել և հակառակ պարագային աստիկանակաւ բռնի ուժ ի գործ դնել։ Յանձնաժողովը նորէն կը դառնայ, բայց աս անգամ կը հանգիստի հազարաւոր մոլեռանդներու և կրօնասէրներու սարսափելի բազմութեան մը՝ որոնք ահագին գոռում գոչումներով և վայրենի ազդակներով կը յարձակին, ինչպէս վերը ըսինք, ամեն ղիմացին ելած քրիստոնեայ անցորդի վրայ։ Քաղքերով, փայտերով, մօրակներով, ձեռքերին ինկած ամեն տաւրկայով զինուած կը յարձակին կառքերու հետեւակներու և հեծեալներու վրայ՝ անխնայ հարուածելով և վիրաւորելով շատերը։ Տարակոյս չկայ թէ այս ցոյցը առաջուց կարգադրուած և պատ-

րաստուած էր այն ջերմեանդ հաւատացեալներու կողմէն։

Այս շահատակներէն շատերը ձերբակալուած են։ Այդ խորատաւ տուածները, հիւսիս անմեղ գաւառակներ գործած, նոր կրօնական թէ Սարգսն մապալ է։

Գ. Ս. Տ. ԱԴԱՄԵԱՆՅ

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՐ

Ինչպէս կը տեսնուի մեր ազգային շուրերէն, երկուշաբթի օր Ընդհանուր Ժողովը նիստ պիտի ընէ Տիգրան փաշայի նախագահութեամբ։

Ասիկայ շուր մը ըլլալէ աւելի աւելիս մըն է հայ հասարակութեան համար, որովհետեւ տարիէ մը ի վեր անձկանօք կապաւոր այս օրին։

Սովորական նիստի մը հանգամանք յունի երկուշաբթի օրուան գումարումը. ընթացիկ գործերու կարգադրութիւն մը չէ որ պիտի քննարկուի։ Ընդհանրապէս, կենսական հարցեր յոծելու, եւ կարելու տնօրինութիւններ ընելու հարկին մէջ պիտի գտնուի մեր երեսփոխանները։

Որքան որ մեծ գիտեմք, առաջնորդական ընտրութեան զանգ — որ գլխաւորապէս պիտի զբաղեցնէ Ժողովը — օրակարգին մէջ ուրիշ խել մը կարելու խնդիրներ եւս կան, որոնք ապահովապէս պիտի ծեծուին ըստ կարգին։

Տարեկան պիտեմք, վարժարաններու վիճակը, տնտեսական գումարներ, Բաղաճական Ժողովին համարաւորութիւնը, Տեղապահ Հօր հրաժարականը եւ ուրիշ այս կարգի հարցեր քաւական են միայն արտաւորութիւնները. ինչպէս մեր ղեկավարները Ժողովականներու այդ հաւաքումին մէջ։

Ժողովրդեան ակնկալութիւնը մեծ է եւ օրինաւոր, ուստի կը սիրեմք յոսանք որ մեր պատահական երեսփոխանները արժանի ու հոգեւոր պիտի մասնակցին այդ նիստին եւ խղճմամբ պիտի պաշտպանեն ազգային շահերը։

Անկողմնակալ ոգի մը եւ անախտ դատարարութիւն մը կապաւոր մեր ընդհանուր Ժողովի անդամներին. սեպ չի պատահիր այս առիթը, ուստի ազգային արժանապատիւութիւնը պաշտպանելու կոչում ունեցող երեսփոխանները իրենց անբողք ուղղամտութիւնը ցուցնելու են երկուշաբթի օրուան նիստին մէջ։

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Տեղի Թեղեկագիր Վիեննայի Թղթակցին գրածին նայելով, Պոլսոյ մէջ յեղափոխական խումբ մը գտնուած է եղբի։ Մեծ յուզում կը տիրէ Երեսփոխարէնի մէջ։

— Ծէվատ փաշայի Միջերկրականի ուսական նաւատորմի շուր հրամանատար Սերիալով ծովակալին հետ ունեցած երկար տեսակցութիւնը սապէս կը պատմեն յունական թերթերը։

«Ծէվատ փաշա՝ ծովակալին ուշադրութիւնը հրաւիրած է այն վտանգներուն վրայ

որ կրնան յառաջ գալ կղզիին մէջ Եօրկիոս իշխանին կառավարիչ ընտրուելով։ Ծովակալը պատասխանած է թէ այդ վտանգները երեւակայական են և թէ ինք վստահ կերպով գիտէ որ շատ մը մահմետական պէյեր նախամեծար կը համարին Եօրկիոս իշխանը ուրիշ որեւէ կառավարիչ մը, որովհետեւ ան միայն վերջ պիտի կրնայ դնել կղզիին մէջ տիրող անկարգ վիճակին՝ հաշտեցնելով քրիստոնեայ և մահմետական տարրերը։

«Ծէվատ փաշա չհամոզուելով յայտնած է թէ այդ մասին տեղեկագիր մը պիտի ստացնէ ծովակալներուն»։

— Հաւաստի և Ռիւզէրի հեռագիրները կը ծանուցանեն թէ Գարտիսի և Ճիօրիս, որ ինչպէս կը յիշուի, Եօրկիոս թագաւորին վրայ սպաննութեան փորձ մը ըրած էին, մահուան դատաւարութեան են։

— Անգլիոյ խորհրդարանին մէջ Սըր Չարլս Տիլք կը յայտարարէ թէ արտաքին գործոց նախարարութեան անցեալ տարուան ուղղութիւնը կը ցուցունէ թէ անպատճառ պէտք է զատել արտաքին գործոց նախարարութիւնը նախարարապետի պաշտօնէն։

— Պոլսէն կը ծանուցանեն Բարիդի Հաւաստի գործակալութեան թէ Բ. Դուռը խոստացած է գոհացում տալ Վօլքի կաթողիկէ քահանայ հայր Տալէզիոյի սպաննութեան համար, երբոր քննութիւն մը բացուի մարտ 24ին ճամբայ ելած յանձնաժողովին կողմէ։

Այդ յանձնաժողովը ընտրուած է ֆրանսական դեսպանատան և յունական հիւպատոսարանին հետ համաձայն։

— Ռուսական Նովոռիսի լրագիրը, օտկան Ռուսկաւալարութեան, կը յայտարարէ թէ Գերմանիա և Աւստրիա կրէտէն քաջուած ըլլալով, Ֆրանսայի, Ռուսիոյ և Անգլիոյ արժանապատուութիւնը կը պահանջէ որ իրենք միմեկին կարգադրեն կրէտական խնդիրը՝ ապաստանելով իրենց ուժերուն, առանց Գերմանիոյ և Աւստրիոյ աջակցութեան։

— Թայմզի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հեռագրէ թէ թուրքերը սկսած ըլլալով իրենց ելեւմտական տարին 1/13 մարտի տուրքերը հաւաքել թիսալիոյ մէջ, յունական դեսպան Պ. Մալթոբօրտաթօ բողոքագիր մը պատրաստելու վրայ է։ Դեսպանները խոստացած են օգնել իրեն։

— Եւրոպական վերջի Սուրհանդակին բերած տեղեկութիւններուն համաձայն, Սօֆիայի օսմ գործակալատար նասուհի պէյ յուզուած է այն յուստես լուրերէն որոնք տարածուած են պուլկարական մամուլին մէջ թուրքիոյ և Պուլկարիոյ արդի յարաբերութիւններուն վրայ։

Գորիսի Տէ Պալմանի յանձնած է պաշտօնական զեկուցում մը որուն մէջ կը հաստատէ թէ «Երկու կառավարութիւններուն միջեւ եղած յարաբերութիւնները անցեալին պէս անկեղծ և բարեկամական են»։

Հակառակ այդ ծանուցագրին, Պուլկարիոյ հեռագրական գործակալութիւնը կը շարունակէ արձանագրել թուրքական խումբերու շարժումները մակեդոնական սահմանագլխին վրայ։

Ասիկայ զատ Պուլկարիոյ պատերազմական նախարարութիւնը կը հերքէ բանակին շարժում վիճակի մէջ դրուելու լուրը, թէեւ քա-

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

նի մը լրագրիւններ կը հաստատեն թէ շատ մը զօրաբաժիններ կը համախմբուին մակեդոնական սահմանագլխին վրայ :

— Կ. Պարէն ստացուած թղթակցութենէ մը կը բողոքէ հետեւեալ քանի մը մանրամասնութիւնները սլովէնացի լրագրագետին սպաննութեան վրայ :

Պ. Մաքէտոնսքի պուլկարական Նովինի լրագրոյն տէր և խմբագիրը իր Բերայի տան մէջ սպաննուեցաւ գեղացիի հագուստով մարդու մը ձեռքով զոր օտարականութիւնը դեռ կարող չէ եղած ձեռք անցնել :

Ոճիւրը անկուր պարագաներու մէջ և տարօրինակ յանդգնութեամբ մը կատարուած է : Ոճագործը ունիկըութիւն մը խնդրած է Պ. Մաքէտոնսքիէ լրագրին վերաբերեալ խնդրոյ մը վրայ խօսակցելու համար :

Լրագրագետը իր աշխատութեան սենեակին մէջ ընդունեց զինքը : Քանի մը վայրկեան հազիւ տեսած էր խօսակցութիւնին երբ յանկարծ սփռագործը ընկալեց մը հանեց գրպանէն և երկու անգամ կրակ ըրաւ Պ. Մաքէտոնսքիի վրայ :

Իր սփռը գործագրելէ ետքը մարդասպանը սենեակին դուռը գոցեց և տանը ելնէր յարկերէն վար խնդրով փողոց ելաւ և հանդարտօրէն հեռացաւ իր երկու ընկերներուն հետ որոնք փողոցին մէջ իրեն կ'սպասէին :

Ոճագործութեան շարժառիթը քաղաքական վրէժխնդրութիւն մը ըլլալ կը կարծուի : Պէտք է յիշել թէ Պ. Մաքէտոնսքիի թերթը Նովինի, երկու ամսուան համար խափանուած էր սպագրական տեսչութեան մէջ հրամանով, բայց վերջերս նորէն հրատարակուելու արտօնութիւն տրուած էր իրեն՝ պայմանաւ որ գէմ գրէ պուլկար յեղափոխականներու արարքին :

Հայրենասէր պուլկարները իբրեւ մատնիչ նկատելով սպաննել տուած են այդ տաճկասէր խմբագիրը :

Ա Չ Ք Ա Յ Ի Ն

Կիմանանք թէ Գահիրէի գաւառական ընդհանուր ժողովը նիստ պիտի ընէ երկուշաբթի օր առաջնորդարանի մէջ, նախագահութեամբ Տիգրան փաշայի :

Փաղաքիս ծանօթ ազգայիններէն Տիգր Տիգրան Եպիփանեան դասն կորուստ մը ունեցաւ երէկ, ա. գետալի արկածի մը զոհ տալով իր երկուքուկէս տաբեկան ալքիլը՝ Աղաւթին :

Երէկ առաւօտ ժամը 11ին միջոցները, տունը մէջ գտնուողները երբ գրադած էին տնական գործերով, տղան խոհանոց մտնելով ձեռքը գտնուած գաւաթը քարով լեցուցած և իր մանկական անգիտակցութեամբ գաւաթին պարունակութիւնը փառարանի մը մէջ նետած է : Վայրկենապէս բոցերը խեղճ տղուն հանդերձներուն հաղորդուելով չարաչար կերպով այրուած է մարմինը : Ուրբան օր ծընողքը վրայ հասած և պէտք եղած դարմանները տուած են երկու բժշկի օգնութեամբ, սակայն ամեն ջանք անօգուտ եղած է :

Բժիշկները խորհուրդ տուած են տղան գերմանական հիւանդանոցը փոխադրել ուր աւելի ազդու միջոցներ կրնային ձեռք առնուիլ, ինչ որ ըրած են, սակայն հազիւ հասած էին հոն, տղան հոգին կաւանդէր անկուր տառապանքներու մէջ :

Այսօր կատարուեցաւ մանկատու Աղաւթին յուղարկութիւնը ի ներկայութեան ազգականաց և բարեկամաց, որոնք կը շրջապատէին այդ տարտառազ հայրը :

Մեր խորին ցաւակցութիւնները Տիգր և Տիկին Եպիփանեանի :

Բարձր, Խտիվը շաբաթ օրը, ամսոյս 9ին, իր սովորական ընդունելութիւնը չպիտի կատարէ Մահմալի մեկնումին պատճառով :

— Օրէնսի Բիւռ իշխանը երէկ ընդունուած է Բարձր, Խտիվէն՝ որ քիչ ետքը փոխադարձ այցելութեան գացած է :

— Բարձր, Խտիվը յայտնող շաբթու վերջերը մտադրութիւն ունի Աղեքսանդրիա երթալ՝ այցելելու համար իր Մանթապահի և Էտֆինայի կալուածները :

— Տեղական լրագրիւններու ըսածին նախելով, Քուրպան Պայրամի պաշտօնական ընդունելութիւնը այս տարի Ապրիլի պուլատին մէջ տեղի պիտի ունենայ, որովհետեւ Բարձր, Խտիվը մտադրութիւն չունի Մանթապահ երթալ մայիսի 15էն առաջ :

— Աղեքսանդրիոյ առողջապահական ժողովին ղրկած յանձնաժողովը այսօր կամ վաղը ձիտտէ կը հասնի :

— Անգլիական գրաւիչ բանակին զինուորները երէկ առաւուս մարզանքներ ըրին բուրգերու դաշտավայրին վրայ :

— Տօթթ, Բիւֆըր, Աղեքսանդրիոյ առողջապահական ժողովին նախագահը, հեռագրով խմայուցած է նախարարապետ և ներքին գործոց նախարար Մուսթաֆա Ֆէհմի փաշայի թէ վերջի 24 ժամերուն մէջ՝ մինչեւ մարտ 29ի իրիկունը միմիայն ժամտախտի մէջ գէպք և երկու մահ պատահած են ձիտտէի մէջ :

— Աղեքսանդրիոյ ծանօթ ազգայիններէն և հանքածուխի վաճառականներէն Տիգր Զարեհ Սըլապը որ երկու շաբաթ առաջ Սուտան գացած էր կարեւոր գործեր կարգադրելու համար, շաբաթ օր Գահիրէի ճամբով Աղեքսանդրիա վերադարձաւ :

— Գահիրէի և Աղեքսանդրիոյ միջեւ հեռագրական հաղորդակցութիւն մը հաստատուելու համար փորձեր կատարուելու վրայ են : Հեռագրային պիտի ծառայեն արդէն գըտնուած հեռագրի թելերը :

— Թանթայի տօնավաճառը այս տարի ապրիլ 1ին պիտի սկսի և պիտի վերջանայ ապրիլ 12ին : Այդ առթիւ երկաթուղիներու վարչութիւնը յաւելուածական կառավարներ սահմանած է որոնք ամեն գծերու վրայ պիտի շրջին տօնավաճառին գացող ահագին բազմութիւնը տեղափոխելու համար :

— Անցեալ ուրբաթ օր երեկոյեան գէմ Մուսքի փողոցին մէջ ահագին բազմութիւն մը ներկայ գտնուեցաւ հայազգիի մը վաճառատան բացումին :

Տիգր Գ. Ի. Սէլվաճեան իր ժամացոյցի միջոցները հոն փոխադրած ըլլալով, ամսոյս 25ին ուրբաթ օր, անոր բացումը կատարեց :

Օղային կազմի լուսաւորութիւնը դիմաւորեց երեկոյթ մը կատար խանութին և ցուցափեղկին ուր ոսկին, աղամանքը և ուրիշ թանկագին ժամացոյցներ կը շրջանէին խուռնուած բազմութեան աչքերը :

Այդ հայ վաճառատունը իր տեսակին մէջ առաջնակարգ դիրք մը բռնելու սահմանուած է, շնորհիւ Տիգր Սէլվաճեանի փորձառութեան և իր արհեստին մէջ ունեցած հում տուութեան :

ՇՈԳՄՈԳ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Կինը՝ Ասուծոյ եւ բնութեան մէջ քիւրիւսացութեան մը արդիւնքն է :

* *

Մարդս Դանիէի մէջ ապրելու եւ Աղեքսանդրիա մեղցելու է . . . գոնէ քաղաքը աւելի աժան կըլլայ :

* *

Առաջնորդ ըլլալու միակ նամբան հետեւորդ ըլլալն է :

* *

Թեեւ forսեն բարեձեւ կիները կը հագնին, բայց անպատշաճ անոր գիւսք կուգ աղջիկ մը ըրած ըլլալու է :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Վաղը գիշեր Ապու Խալիլ թատրոնին մէջ հայ դերասանական ընկերութեան կողմէ պիտի ներկայացուի Մօսքէ Բիւսքո, Տիւմայի հռչակաւոր խաղը : Այդ երեկոյթը կը տրուի ի նպատակ արեւելեան նուագածու Պ. Պ. Խաչիկ Եղգմաճեանի և Թուրքի ձէրահեանի, որոնք, երկուքն ալ, խիստ ծանօթ են թրքական երաժշտութեան սիրահարներուն :

Տօմսերը գրեթէ ամբողջովին սպառուած են և մեծ բազմութիւն մը կապաստի այդ գիշեր :

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Փարոս լրագրի տպագրին մէջ վրտագրութեան նիւղ մըն ալ աւելցուած ըլլալով, կը ծանուցանենք արդոյ հասարակութեան քե պատրաստ ենք ամեն թեսակ վրտագրական գործեր ստանձնել դիւրամասշտի պայմաններով :

Դ Ի Մ Ե Ց Է Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
ԳԱՀԻՐԷ Մուսքի փողոց ԳԱՀԻՐԷ

ՎԻՏԵՆԱՅԻՆ ԳԻՏՈՒՄԻՆ

Եթէ կուզէք ոսկի ժամացոյցներ, արտոյ կանանց 120 դր. և մինչեւ 2500 դր. :

Եթէ կուզէք արծաթ ժամացոյցներ 50 դր. և մինչեւ 200 դր. :

Եթէ կուզէք նիւթէ ժամացոյցներ 10 դր. և մինչեւ 100 դր. :

Եթէ կուզէք պատի և բօնաօլի բազմազան բանտիւներ գաղղիական և ամերիկեան

Եթէ կուզէք նարածեւ շղթաներ ոսկի, արծաթ եւ ոսկեպատ

Եթէ կուզէք այլ և այլ գոհարներ, աղամանեղէյ, ոսկի, արծաթ, ոսկեպատ

ԱՄԵՆ ԶԱՆԱԿԻ ԶԱՅԵԼԻ

Դ Ի Մ Ե Ց Է Ք

Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ
ՄՈՒՍԲԻ ՓՈՂՈՑ ԳԱՀԻՐԷ 1—20

ՀԱՊԵՇԻՍՏԱՆԻ ԱՐՔԻՆԵՐԸ

Թանի մասնաւոր թղթակցին գրութենէն հետեւեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւնները կը քաղենք :

Կայսրուհին պալատան կարգ ու սարգը բոլորովին անկախ է : Իր առանձին վերսկացունքը և խոհարարները ունի : Ընդարձակ սեպհականութիւններու տէր ըլլալով, ամբողջ Հապէշիստանի մէջ՝ ահագին եկամուտներ ունի :

Քիչ անգամ դուրս կ'ելլայ, սակայն ճորդ որ ելլայ, արքունի տիկինները չքեղօրէն զարդաբուած շորերներու վրայ հեծած իրեն կը

հետեւին և չողջողուն հովանոցները հասարակածի պայծառ արեւին տակ իրաւի նկարչազեղ տեսարան մը կը ներկայացնեն մարդու աչքին :

Իրեն ներկայացուած մարդոցմէ զատ ուրիշ մէկը իրաւունք չունի զինքը տեսնելու . ատոր համար դուրս ելած օրերը իր անցնելիք տեղերը կը դատարկուին և նոյն իսկ փողոցներու մէջ մարդիկ շատ հեռու կը կենան իրմէ :

Կայսրուհին՝ ճիշտ իր ամուսնին հակառակը՝ շատ ուշադիր է կարգ ու սարգի պահպանմանը :

Թայիթու (արեւ) կայսրուհին շատ միօրինակ կեանք մը կանցընէ, և ատիկայ գիրցուցած է զինքը : Սակայն , հակառակ ամէն բանի , մեծութեան հով մը ունի և շատ զարգացած է Հապէշի մը համար . իր խօսակցութիւնը հրապոյրէ և սրամտութենէ զուրկ չէ :

Իր հազուատը ուրիշ հապէշահիներու հագուստէն միմիայն իր ծայրայեղ մաքրութիւնովը կը տարբերի : Շատ քիչ կիներ կընդունին , սովորաբար ազգականներ , և ատիկա արքունիքին խտամբերութեան դրոշմ մը կուտայ : Սակայն պաշտօնական ընդունելութիւններու ժամանակ , շատ հազուադիւրս , կայսրուհին իր ոսկեպատ թաւիչէ ծանր վերարկուին տակ անշարժ , Բիւզանդիոնի կայսրուհիներէն մէկը կը յիշեցնէ մեզի :

Կայսեր ու կայսրուհւոյն փողփողուն դիմագծերուն մօտ ամենքը կը նսեմանան : Միմիայն իր ծեր հօրեղբայրը Բաս Տարկիէն կարեւոր դերք մը ունի . մնացածները , կայսեր հօրեղբորդիները , կայսրուհիին եղբայրը , եղբորդին և ամբողջ մեծամեծները ամենէն խոնարհ ծառաներուն յարգական դիրքը ունին :

Այս ի ծնէ պալատականներուն մօտ արքունիքի անհամար պաշտօնեաները կան , իրարու ստորակարգուած մեծէն մինչեւ փոքրը :

Նախ վերակացուները կան — ազաւթները , ինչպէս իրենք կըսեն — որոնք շատ վրստահելի և ազդեցիկ մարդիկ են՝ կատարեալ նախարարներ կայսեր ու կայսրուհիին տան մէջ : Ասոնց քով ամենակարեւոր անձնաւորութիւն մը կայ , Կալրա Սէլասիէն որ կայսեր ընդհանուր քարտուղարն է : Հապէշիստանի ամենէն աւելի զբաղած մարդը ապահովաբար , որուն վրայ կը ծանրանայ ահագին թրջութակցութեան մը բեռը՝ ինչ որ Եւրոպայի մէջ քանի մը նախարարութիւններու զբաղում պիտի կրնար մատակարարել :

Վերակացուներէն յետոյ կուգան դանձապահները : Այդ փափուկ պաշտօնները աւելի այն հապէշներուն կը տրուին որոնք դժբաղդաբար կորսնցուցած են իրենց սերունդը մշտնջենաւորելու ամէն յոյս :

Ասոնցմէ զատ փոխ-վերակացուներով փոխ-գանձապահներով , մանկլաւիկներով ու զինւորականներով լեցուն է արքունիքը :

Ու ասոնց ամենքը հասարակածի աղւոր երկնքի մը , փառաւոր արեւի մը և զուարթ մթնոլորտի մը տակ , զեղեցիկ հորիզոնի մը դիմաց ուր կանջատուին Ֆուրիի և Մանակաշայի շնորհալի կատարներն ու Անթովոյի քարաժայռերը՝ խիստ գծերով չեշտուած :

Ս Ա Փ Ր ՈՒ Ս

Օ Շ Ա Ն Ն Է Ս Պ Է Յ Լ Է Ի Ե Ա Ն

Բերայի ճարտար սափրիչներէն Օհաննէս Պէյէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գահիէ հաստատուած է և մեծապէս զոհ թողուցած իր յաճախորդները , այս անգամ իր նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա , թրամուէյի կայարանին դէմ) ամեն դիւրութիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ . մաքրութիւն , արագութիւն ու վայելչութիւն՝ թէ ածիւման և թէ վարսայարգարութեան մասին :

ՖՕԹՕԿՐԱՖԻ ԷՓԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիներով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ : 2—10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻԱԳԵԱՆ

ԳԱՀԻԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն Եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թարմ դեղեր , չափաւոր գիններով : Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սրկսիալիքներ : Թարմ հաճախից ջուրեր , անուշահոտ քիւնք եւն. Բնական և մանրակրկտական քննութիւնք : Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծանօթ բժիշկներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց համար : 38—50

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԹԻ, ՇՐԱՆՏ ԱՅԱՏԵԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններ ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց չապիկներ , չըջագգեստներ , ևն. մաքրութիւն , ճշգրտահաշիւ , և խիստ չափաւոր գին : 9.—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՆՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Յունուար 1898

ԳԱՀԻԷԷՆ ԱՂԵՐՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուշ.		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.		Էքսորէս	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1, 2 կգ.	առտ.
Գահիւրէ	մեկ.	4 45	—	7 30	—	8 15	—	9 30	—	3 30	—	4 45	—	7 15	—	11 —	—	—	—
Պէնհա	»	8 —	—	7 49	—	9 32	—	10 15	—	4 47	—	5 29	—	8 32	—	12 35	—	—	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	—	10 30	—	10 55	—	5 45	—	6 7	—	9 30	—	1 44	—	—	—
	մեկ.	11 48	6 —	8 34	—	11 15	—	11 —	—	6 26	—	6 11	—	—	—	1 54	—	—	—
Տամանհուր	»	երեկոյ	—	7 34	—	9 41	—	12 49	—	11 58	—	7 59	—	7 7	—	—	—	—	—
	ժամ.	3 10	—	—	—	—	—	—	—	երեկոյ	—	—	—	—	—	—	—	—	—
Աղեքսանդրիա	ժամ.	6 25	—	9 15	—	10 45	—	2 30	—	1 —	—	9 40	—	8 7	—	—	—	—	—

ԱՂԵՐՍԱՆԳՐԻՈՅԷ ԳԱՀԻԷԷ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք		Խառն		Օմնիպ.		Կէս ուշ.		Օմնիպ.		Էքսորէս		Խառն		Օմնիպ.		Էքսորէս		Օմնիպ.	
		1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1,2,3 կգ.	առտ.	1 2 կգ.	առտ.	1 2 3 կարգ	առտ.
Աղեքսանդրիա	մեկ.	—	—	7 —	—	7 15	—	9 —	—	9 20	—	երեկոյ	—	երեկոյ	—	երեկոյ	—	երեկոյ	—
Տամանհուր	»	—	—	8 6	—	8 58	—	10 2	—	12 14	—	4 13	—	5 15	—	8 6	—	1 9	—
	ժամ.	—	—	9 12	—	10 28	—	11 —	—	2 39	—	5 43	—	6 10	—	9 40	—	2 56	—
Թանթա	մեկ.	6 15	—	9 16	—	11 20	—	11 5	—	2 49	—	6 30	—	6 14	—	—	—	3 6	—
	»	—	—	—	—	երեկոյ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Պէնհա	մեկ.	7 18	—	9 59	—	12 23	—	11 46	—	4 43	—	7 33	—	6 52	—	—	—	4 25	—
Գահիւրէ	ժամ.	8 30	—	10 45	—	1 35	—	12 30	—	6 25	—	8 45	—	7 35	—	—	—	5 50	—

ԳԱՀԻԷ-ՍԻԻԷՉ

ՊԷՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՑ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ.	11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ.	9 50	—
Պէնհա)	ժամ.	12 28	7 48	» կայարան	»	—	3 30
	մեկ.	12 33	7 53				
Ջակադիկ)	ժամ.	1 34	8 54	Իսմաիլիա	»	1 20	7 5
	մեկ.	1 44	9 4	Ջակադիկ)	ժամ.	3 7	8 53
Իսմաիլիա	մեկ.	3 40	առտ. 1 —	)	մեկ.	3 17	9 3
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	Պէնհա)	ժամ.	4 13	9 47
Տօք (քարափ)	ժամ.	6 55	—	)	մեկ.	4 17	9 4
				Գահիրէ	ժամ.	5 5	10 35